Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 2. Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներն օտարերկրյա պետություններում պաշտպանում են Հայաստանի Հանրապետության, նրա քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարության ~~արտաքին գործերի նախարարության~~ և օտարերկրյա պետությունում հյուպատոսական հիմնարկի կողմից մատուցվող՝ օտարերկրյա պետություններ ներկայացնելու համար Հայաստանի Հանրապետությունում դատվածության և հետախուզման առկայության մասին տեղեկանքների տրամադրման գործառույթները կարող են պատվիրակվել նաև պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորներին: Օպերատորների ցանկը, օպերատորի հետ կնքվող ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը և օպերատորին առաջադրվող նվազագույն տեխնիկական պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հյուպատոսական հիմնարկները նպաստում են այլ պետությունների հետ Հայաստանի Հանրապետության բարեկամական հարաբերությունների զարգացմանը և բազմակողմանի կապերի ընդլայնմանը:

Հոդված 3. Հյուպատոսական հիմնարկները Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարության ~~արտաքին գործերի նախարարության~~ կառուցվածքային ստորաբաժանումներն են օտարերկրյա պետություններում:

Հոդված 12. Հյուպատոսական հիմնարկները ենթարկվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարությանը ~~արտաքին գործերի նախարարությանը~~ և գործում են նստավայր պետությունում

Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի ընդհանուր քաղաքական ղեկավարության ներքո:

Հոդված 13. Հյուպատոսական պաշտոնատար անձինք և հյուպատոսական հիմնարկների աշխատակիցները գտնվում են պետական ծառայության մեջ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարությունում~~արտաքին գործերի նախարարությունում~~:

Հոդված 15. Հյուպատոսական հիմնարկի ղեկավարին նշանակում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարը ~~արտաքին գործերի նախարարը~~: Հյուպատոսական հիմնարկի ղեկավարը համարվում է նշանակված արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարի ~~արտաքին գործերի նախարարի~~ ստորագրությամբ հյուպատոսական արտոնագիր ստանալուց հետո: Հյուպատոսկան արտոնագիրը ներկայացվում է նստավայր պետության կառավարություն:

Հոդված 22.2. Հյուպատոսական հիմնարկների կողմից տեղեկանքները, տեղեկանքների տրամադրման կարգը և ձևանմուշները հաստատում է արտաքին գործերի և միջազգային առևտրի ոլորտում ~~արտաքին գործերի ոլորտում~~ Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարը, եթե այլ իրավական ակտերով դրանք սահմանված չեն:

Հոդված 29. Հյուպատոսական հիմնարկի ղեկավարը կատարում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարության ~~արտաքին գործերի նախարարության~~ միջոցով իրեն փոխանցված Հայաստանի Հանրապետության դատարանների, դատախազության և քննչական մարմինների՝ իր հյուպատոսական տարածաշրջանում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին վերաբերվող հանձնարարությունները: Նշված հանձնարարությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության և միջազգային իրավունքի նորմերի համաձայն:

Հոդված 55. Կարանտինային հիվանդությունների ի հայտ գալու դեպքում հյուպատոսական հիմնարկի ղեկավարն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարությանը ~~արտաքին գործերի նախարարությանը~~՝ նշելով վարակված շրջանի անվանումը, դեպքերի թիվը և տեղական իշխանությունների կողմից ձեռնարկված հակահամաճարակային միջոցառումները:

Հյուպատոսական հիմնարկի ղեկավարը Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու թույլտվություն ստացած անձանց տեղեկացնում է Հայաստանի

Հանրապետություն մուտք գործելու ժամանակ պատվաստման վերաբերյալ միջազգային հավաստագիր ներկայացնելու անհրաժեշտության մասին:

Հոդված 56. Հյուպատոսական տարածաշրջանի սահմաններում գյուղատնտեսական բույսերի վտանգավոր հիվանդությունների կամ վնասատուների ի հայտ գալու, ինչպես նաև անասունների և թռչունների զանգվածային հիվանդությունների կամ մարդկանց և կենդանիների համար նույնանման վտանգ ներկայացնող հիվանդությունների տարածման սպառնալիքի դեպքում հյուպատոսական հիմնարկի ղեկավարն այդ մասին անհապաղ տեղյակ է պահում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարությանը~~արտաքին գործերի նախարարությանը~~:

Հոդված 58. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարը ~~արտաքին գործերի նախարարը~~, համաձայնեցնելով նստավայր պետության հետ, կարող է հյուպատոսական գործողություններ կատարելու համար նշանակել պատվավոր հյուպատոսներ:

Հոդված 60. Պատվավոր հյուպատոսների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարը ~~արտաքին գործերի նախարարի~~ կողմից: